

ջանալով զինւորական արուեստի մէջ, որ ուժն է պետութիւն-
ներուն, այլ մնալով անխիստական լեռնականներ, ապրեցան
հովուական և աւաղակային կեանքով. իրենց ապրուստն ու
գործը եղաւ խաշնարածութիւն, ու աւաղակային յափշտա-
կութիւնը՝ միշտ իշխանութիւնների աչքէն հեռու, միշտ փա-
խըստական, միշտ կիսանկախ:

Հայերու ու Քիւրդերու այս տարբեր ու հակընդդէմ
կենցաղը թիւրք կառավարութեան համար ոչ թէ քաղաքա-
կրթական պայմաններով տիրելու, այլ «Բաժանէ որ տիրես»
սովորութեան միջոցին դիմելու առիթն եղաւ: Հայերը իրենց
անտեսական շահերը Քրդերէ վտանգի ենթարկուելու պարա-
զային, կը դիմէին թիւրք իշխանութեան, որ առանձին մտա-
ծումով կը ճնշէր Քիւրդին, որպէս զի որոշ չափով ապահովուի
երկրի անտեսութիւնը. բայց նոյն թիւրք իշխանութիւնը կը
ճնշէր և Հային, երբէք չը լսելով անոր բողոքը ու թողնելով
որ նա քիչ մը հարստահարուի Քիւրդէն, որպէս զի այդ ժա-
մանակի իշխանութեան տիրապետութիւնը զօրեղ լինի: Այս-
պէս, Հայերն ու Քիւրդերը այս կառավարական սխտեմին
շնորհիւ, ալ աւելի կը թշնամանային իրարու հետ. երկրի զար-
գացումն ետ կը մնար, կամաց կամաց ջնջուելու համար(*):

(*) «Տէր Քրիստիիսէ Սրիէնդ»էն. 1904. Նոյ. ամսաթերթը)

«Ոսմ. կառավարութիւնը Քիւրդերէ իշխումը (Հայաստանի) գաւառ-
ներու մէջ իր իշխանութիւնը ապահովելէն ու հաստատելէն վերջը, դեռ
երկար տտեն քիւրդական ցեղերու հետ կռուիլ ստիպուեցաւ, որոնք
միայն ահամայ թիւրքական լուծին խոնարհեցան:

Իր նպատակին համեմու համար, թիւրքական կառավարութիւնը
երկու ծամբայ բռնեց. նոյն քիւրդական գաւառներու մէջ տաճկական
գաղթականութիւններ հիմնեց, որպէս զի այսպիսով քիւրդերուն և Հայոց
մէջ, որոնք դարերէ ի վեր ազգակցական և բարեկամական յարաբերու-
թիւններ ունէին, սեպ մը մտցնէ (իրարմէ բաժնէ):

Ինչպէս ծանօթ է Քիւրդերը, մեծ մասամբ թափառաշրջիկ են,
անոնց բարօրութիւնը արօտատեղիներու և պատերազմական աւարի վրայ
կը կայանայ.

Երբ Քիւրդերը իրենց անկախութիւնը կորսնցուցին, բնականաբար
իրենց հասոյթին կէսէն զրկուեցան: Սուլթանը լաւ հասկցած էր որ
Քիւրդերը երկրին անտեսական զարգացման համար վտանգաւոր և վնաս-